

5. բանկի տեղեկատվական հոսքերը պաշտպանված խեղաթյուրումներից, և ստացված տեղեկատվության ճշտման ու ստուգման ի՞նչ մեխանիզմներ կան,
6. ներբանկային հաշվետվական համակարգը համապատասխանում բանկի կառավարելիության պահանջներին, և որքանո՞վ է այն նպաստում որոշումների կայացման գործընթացին,
7. բանկի տեղեկատվական համակարգը ինչքանո՞վ է ճկուն. և ի վիճակի՞ է արդյոք այն արագ արձագանքելու բանկի միջավայրի փոփոխությանը և այլն:

Իրականում ներքին հսկողական համակարգի գնահատման չափորոշիչներն անհամեմատ ավելի բազմազան և բազմաբնույթ կարող են լինել, քան ներկայացված է վերը: Կարևորն այն է, որ ներքին հսկողական համակարգի գնահատման համակարգը մշակելիս պետք է առաջնորդվել Մենթոջական ընդգրկվածության սկզբունքով, այսինքն՝ բանկում չի կարող լինել որևէ օղակ, երևույթ կամ գործողություն, որը դուրս լինի ներքին հսկողական համակարգից:

Ներքին հսկողական համակարգի գնահատման համակարգի հիմքում պետք է ընկած լինեն հստակ սկզբունքներ և ստանդարտ մոտեցումներ, որոնք հնարավորինս կբացառեն նաև համակարգը կիրառողի սուբյեկտիվիզմը և համադրելի կդարձնեն տարբեր բանկերի ներքին հսկողական համակարգի գնահատականները:

Ներկայացված մոտեցման արդիականությունը վկայում են 2008 թվականի ընթացքում ֆրանսիական «Մոսիեստե ժեներալ» բանկում տեղի ունեցած իրադարձությունները՝ ֆոնդային շուկայում կրած կորուստը, այն դեպքում, երբ բանկը վերջին տարիներին գործել է շահույթով: Նշվածը «թաքնված» խնդիրների շարքից է:

ԱՆՆԱ ԲԱՅԱԴՅԱՆ

ՀՊԱՀ դասախոս

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետությունում գործող առևտրային բանկերի գործունեության արդյունավետության գնահատման ժամանակ կարևոր նշանակություն է ստանում շահութաբերության ցուցանիշների վիճակագրական վերլուծությունը՝ ինչպես դրանց վրա ազդող գործոնների, այնպես էլ առանձին գործոնի ազդեցության չափի: Օրինակ, դժվար չէ նկատել, որ յուրաքանչյուր բանկի շահութաբերության ամենակարևոր ու հաճախ կիրառելի ցուցանիշներից են ROE-ն ու ROA-ն, և միաժամանակ, դրանց առընթեր նաև բանկի ակտիվների և սեփական կապիտալի հարաբերակցության գործակիցը (կամ այլ կերպ՝ բանկի մուլտիպլիկատորը): Քանի որ ROE-ն և ROA-ն ունեն մույն համարիչը՝ զուտ շահույթը հարկումից հետո, ուստի դրանց հիման վրա էլ այդ հարաբերական ցուցանիշներից մեկը կարելի է արտահայտել մյուսով: Բերված ցուցանիշների միջև եղած կապն արտահայտվում է հետևյալ բանաձևի միջոցով¹.

$$ROE = ROA \times \frac{U}{U4} \quad (1)$$

որտեղ՝

ROE-ն բանկի սեփական կապիտալի շահութաբերությունն է,
ROA-ն՝ բանկի ակտիվների շահութաբերությունը,
U - ն բանկի ակտիվներն են,

¹ Пяттер С. Роуз. Банковский менеджмент. М., 1995, с. 133.

ՄԿ - ն բանկի սեփական կապիտալն է:

(1) բանաձևն ավելի արտահայտիչ դարձնելու համար ներկայացնենք ավելի հասկանալի տեսքով.

$$\frac{\text{Չուտ շահույթ (հարկումից հետո)}}{\text{Սեփական կապիտալ}} = \frac{\text{Չուտ շահույթ (հարկումից հետո)}}{\text{Ակտիվներ}} \times \frac{\text{Ակտիվներ}}{\text{Սեփական կապիտալ}} \quad (2)$$

Վերոնշյալ հավասարման միջոցով կարելի է գնահատել բանկի շահութաբերությունը՝ հաշվի առնելով հարկումից հետո Չուտ շահույթի, սեփական կապիտալի ու ակտիվների բացարձակ մեծությունները և դրանցով կազմված հարաբերակցությունները: Այսպես, ROA-ի ցածր մակարդակ ունեցող բանկը կարող է այնուամենայնիվ ապահովել ROE-ի հարաբերականորեն բարձր մակարդակ, եթե նա ներգրավի մեծ չափերով միջոցներ՝ ավանդների (դեպոզիտների), այլ պարտավորությունների տեսքով ավելացնելով իր ակտիվները:

Փաստորեն ROE-ի և ROA-ի միջև եղած հարաբերակցությունը հանդես է գալիս բանկի ղեկավարների առջև մշտապես ծագող ռիսկայնության բավարար և շահութաբերության ցանկալի մակարդակների ապահովման խնդիր:

Օրինակ՝ 1% ROA-ի մակարդակ ունեցող բանկի համար յուրաքանչյուր մեկ միավոր սեփական կապիտալի դեպքում պահանջվելու են ոչ պակաս 10 միավորի չափով ակտիվներ, որպեսզի ROE-ն հավասար լինի 10%-ի: Ասվածը ներկայացնենք հաշվարկի տեսքով՝ ելնելով (1) բանաձևից.

$$ROE = ROA \times \frac{U}{U4} = 0,01 \cdot \frac{10}{1} \cdot 100\% = 10\%$$

Սակայն, եթե սպասվում է ROA-ի իջեցում մինչև 0.5%-ի չափով, ապա ROE-ի 10% ապահովելու համար յուրաքանչյուր մեկ միավոր սեփական կապիտալի համար կպահանջվեն քսան միավորի չափով ակտիվներ:

$$ROE = ROA \times \frac{U}{U4} = 0,005 \cdot \frac{20}{1} \cdot 100\% = 10\%$$

Ավելի պարզ պատկերացում ունենալու համար կազմենք բանկի ռիսկայնության և շահութաբերության գնահատումը բնութագրող աղյուսակ, որը հնարավորություն կտա կողմնորոշվելու, թե բանկի կողմից ցանկալի շահութաբերության մակարդակի ապահովման համար ակտիվների և սեփական կապիտալի ինչպիսի հարաբերակցություններ են պահանջվում (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Բանկի ռիսկայնության և շահութաբերության գնահատման ցուցանիշներ¹

Հարաբերակցությունների անվանումները		Ակտիվների շահութաբերությունը (ROA), %			
		0.5	1.0	1.5	2.0
		Այդ դեպքում ROE-ն կլինի հավասար, %			
Ակտիվների և սեփական կապիտալի հարաբերակցությունը	5: 1	2.5	5.0	7.5	10.0
	10: 1	5.0	10.0	15.0	20.0
	15: 1	7.5	15.0	22.5	30.0
	20: 1	10.0	20.0	30.0	40.0

Աղյուսակ 1-ից երևում է, որ այն բանկը, որի ակտիվների և սեփական կապիտալի հարաբերակցությունը կազմում է 5:1, ապա կարող ենք ակնկալել 2,5% ROE-ի և 0,5% ROA-ի

¹ Питер С. Роуз. Банковский менеджмент. М., 1995, с. 134.

կամ 10% ROE-ի և 2% ROA-ի պայմաններում: Հետևաբար ROA-ի իջեցմանը զուգընթաց բանկը պետք է ունենա բարձր ռիսկայնություն՝ ընդհանուր ակտիվների և սեփական կապիտալի հարաբերակցության առումով, որպեսզի դրան առընթեր կարողանա ապահովել սեփական կապիտալի շահութաբերության բարձր մակարդակը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում արդեն գործում են թվով 21 առևտրային բանկեր և, որոնց եկամտաբերությունը գնահատելու ու միաժամանակ կողմնորոշվելու համար, քե դրանցից յուրաքանչյուրը տարբեր ժամանակաշրջաններում արդյո՞ք հուսալի վիճակո՞ւմ են գտնվել, քե՞ ոչ, ներկայացնենք հաշվարկային աղյուսակներ ROE-ի, ROA-ի և բանկի մուլտիպլիկատորի գծով՝ հիմք ընդունելով բանկերի հաշվապահական հաշվեկշռում և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում արտացոլված տվյալները (2001-2007թթ.): Հաշվարկները կատարված են հեղինակի կողմից (տե՛ս 2-րդ, 3-րդ և 4-րդ աղյուսակները):

Աղյուսակ 2

ՀՀ առևտրային բանկերի ROA-ի հաշվարկային հարաբերական ցուցանիշները (2001-2007թթ.)¹

№	Բանկերի անվանումները	Տարիները						
		2001թ.	2002թ.	2003թ.	2004թ.	2005թ.	2006թ.	30.06.07թ.
1.	«ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	2.26	2.54	2.58	3.33	3.85	3.56	2.34
2.	«Կոմվերս բանկ» ՓԲԸ	0.69	1.70	1.94	5.00	4.14	3.97	1.29
3.	«ՎՏԲ - Հայաստան բանկ» ՓԲԸ	-13.27	0.31	1.11	1.89	2.15	4.50	0.18
4.	«Արդշինինվեստբանկ» ԲԲԸ	-	-	3.29	4.68	4.18	3.03	2.39
5.	«Հայեկոմոմբանկ» ԲԲԸ	0.83	3.20	4.31	3.87	3.47	3.57	1.39
6.	«ԱԿԲԱ-կրեդիտ-ագրիկոլ բանկ» ՓԲԸ	4.86	3.94	1.93	2.28	2.83	3.00	2.27
7.	«Ամելիք բանկ» ՍՊԸ	3.67	3.89	4.39	5.34	4.18	2.06	0.75
8.	«Յունիքբանկ» ՓԲԸ	0.17	1.82	0.28	0.12	1.10	1.36	1.92
9.	«Հայնեքսբանկ» ՓԲԸ	-3.85	2.02	3.32	2.79	2.45	2.25	1.17
10.	«Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ	1.48	0.06	-1.32	-6.0	-2.09	2.60	3.29
11.	«Հայրիզնեսբանկ» ՓԲԸ	0.51	0.21	0.03	0.06	-0.54	0.93	4.84
12.	«Արցախբանկ» ՓԲԸ	1.43	2.84	2.31	1.36	3.00	2.82	1.33
13.	«Ինեսկոբանկ» ՓԲԸ	6.01	7.39	9.62	9.06	4.73	4.51	2.07
14.	«Առեկսիմբանկ» ՓԲԸ	0.33	0.22	-1.87	0.63	1.29	2.02	0.81
15.	«Սեյլաք բանկ Հայաստան» ՓԲԸ	-1.76	-0.13	0.02	-1.80	1.78	8.01	1.44
16.	«Կասկադ բանկ» ՓԲԸ	-1.12	-0.58	0.56	0.92	1.20	1.37	1.46
17.	«Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ	2.54	-2.21	4.99	0.54	3.74	8.41	1.16
18.	«ԻԹԲ միջազգային առևտրային բանկ» ՓԲԸ	2.17	14.62	1.01	2.04	1.49	0.51	0.54
19.	«ԲՏԱ ինվեստբանկ» ՓԲԸ	-4.52	0.10	2.55	-7.02	-5.62	0.48	1.01
20.	«Արմավիաբանկ» ՓԲԸ	-	-	-	12.94	3.21	3.57	0.81
21.	«Արարատ բանկ» ՓԲԸ	-	-	-	-	-0.25	0.75	0.89
ՀՀ բանկային համակարգ		0.01	2.19	2.32	2.74	3.06	3.05	1.66

¹ Հաշվարկները կատարված են ՀՀ առևտրային բանկերի հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունների տվյալների հիման վրա:

Թիվ 1 աղյուսակում բերված նորմատիվային և արդեն փաստացի հաշվարկված ROE-ի, ROA-ի և բանկի մուլտիպլիկատորի տվյալներից կարող ենք գալ այն հետևության, թե ուսումնասիրվող տարիներին որ առևտրային բանկն է գտնվել բավարար եկամտաբերության ու ռիսկայնության մակարդակում:

Այսպես, օրինակ, ըստ թիվ 2, 3 և 4 հաշվարկային աղյուսակների՝ 2004 թվականին «Ինտերբանկ» ՓԲԸ ROA-ն հավասար է եղել 9.06%, ROE-ն՝ 34.88%, իսկ մուլտիպլիկատորը՝ 3.85:1 հարաբերակցության: Այսինքն՝ տվյալ տարում, ըստ բանկի մուլտիպլիկատորի նորմատիվի (5:1), մեկ միավոր սեփական կապիտալին բաժին են ընկել 3.85 միավոր ակտիվներ: Չնայած 1.25 (5.0 – 3.85) բացարձակ շեղմանը՝ բանկն ապահովել է բավականաչափ բարձր շահութաբերություն սեփական կապիտալի հաշվով (34.88%): Նման ձևով կարող ենք կատարել տնտեսագիտական մեկնաբանություններ մնացած բոլոր առևտրային բանկերի գծով:

Աղյուսակ 3

ՀՀ առևտրային բանկերի ROE-ի հաշվարկային հարաբերական ցուցանիշները (2001-2007թթ.)¹

№	Բանկերի անվանումները	Տարիները						
		2001թ.	2002թ.	2003թ.	2004թ.	2005թ.	2006թ.	30.06.07թ.
1.	«ԷՆԶ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ	20.78	30.46	32.36	37.32	39.65	39.55	20.19
2.	«Կոմվերս բանկ» ՓԲԸ	10.59	12.80	14.16	27.45	19.19	14.74	5.53
3.	«ՎՏԲ - Հայաստան բանկ» ՓԲԸ	-84.16	2.82	9.85	22.41	10.20	22.00	0.71
4.	«Արդշինինվեստբանկ» ԲԲԸ	-	-	19.21	32.90	25.57	18.89	13.96
5.	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	6.85	23.26	26.85	26.83	21.64	22.83	10.98
6.	«ԱԿԲԱ-կրեդիտ-ագրիկոլ բանկ» ՓԲԸ	12.18	11.27	7.81	9.23	13.97	8.66	6.92
7.	«Ամելիք բանկ» ՍՊԸ	20.00	24.69	27.98	30.36	24.96	18.82	4.72
8.	«Յունիքբանկ» ՓԲԸ	0.22	4.43	1.27	0.52	6.66	11.10	10.71
9.	«Հայներարտբանկ» ՓԲԸ	-33.50	17.71	18.61	12.57	9.56	7.48	3.98
10.	«Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ	11.05	0.26	-6.64	-22.78	-5.94	6.35	7.40
11.	«Հայքիզնեսբանկ» ՓԲԸ	3.21	1.57	0.19	0.25	1.98	5.66	16.10
12.	«Արցախբանկ» ՓԲԸ	9.34	20.74	15.79	13.17	22.48	21.50	7.82
13.	«Ինտերբանկ» ՓԲԸ	26.42	36.34	39.34	34.88	20.03	16.52	8.28
14.	«Առեկսիմբանկ» ՓԲԸ	0.83	0.67	-7.93	2.13	6.33	8.65	3.67
15.	«Մեյլաք բանկ Հայաստան» ՓԲԸ	-14.56	-0.55	0.09	-8.78	5.18	20.26	3.97
16.	«Կասկադ բանկ» ՓԲԸ	-3.45	-1.87	2.42	3.97	1.90	2.57	2.97
17.	«Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ	10.30	-5.26	8.12	1.06	6.58	16.54	1.98
18.	«ԻԹԲ միջազգային առևտրային բանկ» ՓԲԸ	4.36	22.78	1.40	3.28	2.54	0.94	0.87
19.	«ԲՏԱ ինվեստբանկ» ՓԲԸ	-5.21	0.16	3.27	-8.32	-9.78	1.49	3.79
20.	«Արմավիսբանկ» ՓԲԸ	-	-	-	4.97	5.15	7.95	2.89
21.	«Արարատ բանկ» ՓԲԸ	-	-	-	-	-0.52	2.39	2.17
ՀՀ բանկային համակարգ		0.06	12.22	13.33	15.74	14.58	14.21	7.23

¹ Հաշվարկները կատարված են ՀՀ առևտրային բանկերի հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունների տվյալների հիման վրա:

**ՀՀ առևտրային բանկերի մուլտիպլիկատորի հաշվարկային հարաբերական ցուցանիշները
(2001-2007թթ.)¹**

№	Բանկերի անվանումները	Տարիները						
		2001թ.	2002թ.	2003թ.	2004թ.	2005թ.	2006թ.	30.06.07թ.
1.	«Էյջ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ	9.19	11.99	12.54	11.21	10.30	11.11	8.63
2.	«Կոմվերս բանկ» ՓԲԸ	15.35	7.53	7.30	5.49	4.64	3.71	4.29
3.	«ՎՏԲ - Հայաստան բանկ» ՓԲԸ	6.34	9.10	8.87	11.86	4.74	4.89	3.94
4.	«Արդշինինվեստբանկ» ԲԲԸ	-	-	5.84	7.03	6.12	6.23	5.84
5.	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	8.25	7.27	6.23	6.93	6.24	6.39	7.90
6.	«ԱԿԲԱ-կրեդիտ-ագրիկոլ բանկ» ՓԲԸ	2.59	2.86	4.05	4.03	4.94	2.89	3.05
7.	«Ամելիք բանկ» ՍՊԸ	5.45	6.35	6.37	5.69	5.97	9.14	6.29
8.	«Յունիքբանկ» ՓԲԸ	1.29	2.43	4.54	4.33	6.05	8.16	5.58
9.	«Հայնեքսբանկ» ՓԲԸ	8.70	9.73	5.61	4.51	3.90	3.32	3.40
10.	«Զարգացման Հայկական բանկ» ԲԲԸ	7.47	4.33	5.03	3.80	2.84	2.44	2.25
11.	«Հայքիզնեսբանկ» ՓԲԸ	6.29	7.48	6.33	4.17	3.67	6.08	3.33
12.	«Արցախբանկ» ՓԲԸ	6.53	7.30	5.09	9.68	7.49	7.62	5.88
13.	«Ինեկոբանկ» ՓԲԸ	4.40	4.92	4.09	3.85	4.23	3.66	4.0
14.	«Առեկսիմբանկ» ՓԲԸ	2.52	3.05	4.24	3.38	4.91	4.28	4.53
15.	«Մելլաք բանկ Հայաստան» ՓԲԸ	8.27	4.23	4.5	4.88	2.91	2.53	2.76
16.	«Կասկադ բանկ» ՓԲԸ	3.08	3.22	4.32	4.31	1.58	1.88	2.03
17.	«Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ	4.06	2.38	1.63	1.96	1.76	1.97	1.71
18.	«ԻԹԲ միջազգային առևտրային բանկ» ՓԲԸ	2.01	1.56	1.39	1.61	1.70	1.84	1.61
19.	«ԲՏԱ ինվեստբանկ» ՓԲԸ	1.15	1.60	1.28	1.19	1.74	3.10	3.75
20.	«Արմավիաբանկ» ՓԲԸ	-	-	-	3.84	1.60	2.23	3.57
21.	«Արարատ բանկ» ՓԲԸ	-	-	-	-	2.08	3.19	2.44
ՀՀ բանկային համակարգ		6.0	5.58	5.75	5.74	4.76	4.66	4.36

ROE-ն կարող ենք արտահայտել այլ հարաբերակցությունների տեսքով՝

$$ROE = \frac{(1) \quad \text{Զուտ շահույթ} \quad (2) \quad \text{Եկամուտներ} \quad (3) \quad \text{Ակտիվներ}}{(1) \quad \text{Զուտ շահույթ} \quad (2) \quad \text{Եկամուտներ} \quad (3) \quad \text{Ակտիվներ}} \times \frac{\text{Եկամուտներ}}{\text{Ակտիվներ}} \times \frac{\text{Ակտիվներ}}{\text{Սեփական կապիտալ}} \quad (3)$$

կամ ROE-ն շահույթի զուտ մարժայի (1-ին հարաբերակցություն), ակտիվների օգտագործման գործակցի (2-րդ հարաբերակցություն) և բանկի մուլտիպլիկատորի (3-րդ հարաբերակցություն) արտադրյալն է:

¹ Հաշվարկները կատարված են ՀՀ առևտրային բանկերի հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունների տվյալների հիման վրա:


ցություն) արտադրյալն է: Նշված երեք բաղադրատարրերից յուրաքանչյուրը բնութագրում է բանկային գործունեության որևէ ոլորտ: Այսպես՝

1-ին հարաբերակցությունը՝ շահույթի զուտ մարժան, արտացոլում է բանկի կողմից ծախսերի կառավարման արդյունավետությունը և բանկային ծառայությունների մատուցման համար բանկերի կողմից գանձվող միջնորդային վարձավճարների ուղղությամբ բանկի կողմից վարվող քաղաքականությունը,

2-րդ հարաբերակցությունը՝ ակտիվների օգտագործման գործակիցը, բնորոշում է բանկային պորտֆելի կառավարման քաղաքականության արդյունավետությունը,

3-րդ հարաբերակցությունը՝ առևտրային բանկի մուլտիպլիկատորը, արտացոլում է ֆինանսական լծակի օգտագործման արդյունավետությունը կամ այլ կերպ՝ բանկի կողմից միջոցների ներգրավման ուղղությամբ վարվող քաղաքականության արդյունավետությունը:

Հաշվի առնելով բանկի սեփական կապիտալի շահութաբերության կարևորությունը՝ այն ներկայացնենք գծապատկերի տեսքով՝ հիմք ընդունելով (1) կամ (3) բանաձևերում բերված արտահայտությունները (գծապատկեր 1):



Գծապատկեր 1

Առևտրային բանկերի մեծամասնության համար ամենամեծ արժեքը սովորաբար ընդունում է սեփական կապիտալի մուլտիպլիկատորը: Տվյալ ցուցանիշը բնութագրում է բանկի կողմից ֆինանսական լծակի օգտագործման արդյունավետությունը և ցույց է տալիս սեփական կապիտալի մեկ միավորին բաժին ընկնող ակտիվների ցանկալի մակարդակը, հատկապես ֆինանսական ռեսուրսների աղբյուրների կառուցվածքը:

Հետևաբար որքան բարձր է մուլտիպլիկատորի մակարդակը, այնքան բարձր կլինի բանկի սնանկացման հավանականության աստիճանը, իսկ մյուս կողմից էլ մուլտիպլիկատորի բարձր մակարդակը հնարավորություն է տալիս բանկին մեծացնելու եկամուտների մակարդակը:

Հաճույթի գուտ մարժան կամ գուտ շահույթի և եկամուտների հարաբերակցությունը նույն-
պես գտնվում է բանկի ղեկավարների ուշադրության կենտրոնում, քանի որ տվյալ ցուցանիշի
բարձրացման նպատակով բանկերը պետք է աշխատեն նվազեցնել ծախսերը և մեծացնել
եկամուտները:

Ակտիվների շահութաբերության մակարդակի բարձրացման նպատակով բանկերը պետք է
վարեն ակտիվների կառուցվածքի բարելավմանն ուղղված քաղաքականություն՝ հատկապես
բարձր եկամուտ ապահովող և ցածր ռիսկ ունեցող ակտիվներում ներդրումներ կատարելու
միջոցով:

ROE-ի հաշվարկման բանաձևում որոշակի ձևափոխություններ կատարելուց հետո կարող
ենք ստանալ մի բանաձև¹, որը հնարավորություն կտա գնահատելու ROE-ի վրա բանկի կողմից
կառավարման ենթակա չորս ոլորտներում առկա խնդիրների ազդեցությունը՝

$$ROE = \frac{\text{Չուտ շահույթ (հարկումից հետո)}}{\text{Չուտ շահույթ (մինչև հարկումը)}} \times \frac{\text{Չուտ շահույթ (մինչև հարկումը)}}{\text{Եկամուտներ}} \times \frac{\text{Եկամուտներ}}{\text{Ակտիվներ}} \times \frac{\text{Ակտիվներ}}{\text{Սեփական կապիտալ}} \quad (4)$$

կամ ROE-ն հավասար է հարկային վճարումների կառավարման արդյունավետության,
ծախսերի կառավարման արդյունավետության, ակտիվների կառուցվածքի կառավարման
արդյունավետության և բանկի կազմավորման միջոցների աղբյուրների կառավարման արդյու-
նավետության գործակիցների արտադրյալին:

Տվյալ պարագայում մենք պարզապես գուտ շահույթը բաժանեցինք երկու բաղկացուցիչ
տարրերի.

1. *հարկային վճարումների կառավարման արդյունավետության ցուցանիշի*, որը հանգեցնում
է բանկի ակտիվային և պասիվային գործառնությունների կառավարման արդյունքում մրա
կողմից հարկային վճարումները նվազագույնի հասցնելու խնդրի լուծմանը,
2. *չհարկված շահույթի և եկամուտների հարաբերակցության ցուցանիշի*, ցույց է տալիս
բանկի եկամուտների այն մասը, որը բոլոր տեսակի ծախսերի փոխհատուցումից (բացի
շահութահարկից) հետո մնում է բանկին որպես գուտ շահույթ մինչև հարկումը: Հետևաբար
այս ցուցանիշն արտահայտում է բանկերի կողմից ծախսերի կատարման արդյունա-
վետության աստիճանը:

Այսպես, ենթադրենք որևէ բանկի համար ունենք հետևյալ ցուցանիշները, ըստ 2007թ.
(օրինակ՝ «Էյջ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ).

1-ին կիսամյակի վերջի դրությամբ (մլն դրամ).

• գուտ շահույթ հարկումից հետո	1013.0
• չհարկված շահույթ	2277.7
• եկամուտներ	6428.3
• ակտիվներ	80995.5
• սեփական կապիտալ	9368.1

Տվյալ բանկի համար հաշվարկները կունենան հետևյալ տեսքը՝

$$ROE = \frac{1892.3}{2277.7} \times \frac{2277.7}{6428.3} \times \frac{6428.3}{80995.5} \times \frac{80995.5}{9368.1} = 0.83160.35560.07968.6466100\% = 10.8\%$$

Ակնհայտ է, որ վերոնշյալ չորս հարաբերակցություններից որևէ մեկի նվազման դեպքում
բանկի ղեկավարները պետք է բացահայտեն նվազման պատճառները և հանգեն համապա-

¹ Բայադյան Ա. Հ., Առևտրային բանկերի շահութաբերության ցուցանիշների համակարգը և գործոնային
վերլուծությունը (ռառմանամեթոդական ցուցում), Երևան, 2004, էջ 28:

տասխան եզրակացությունների: Օրինակ, եթե հարկումից հետո զուտ շահույթի և չհարկված շահույթի հարաբերակցությունը հաջորդ տարի նվազի 0.831-ից, ապա բանկի ղեկավարները պետք է ուշադրություն դարձնեն, թե ինչպես են իրականացվում շահութահարկի գծով վճարումները և դրա կառավարումը: Եթե չհարկված շահույթի և եկամուտների հարաբերակցությունը նվազի 0.355-ից, ապա բանկը պետք է վերանայի իր ծախսերի կառավարման քաղաքականությունը, իսկ եթե եկամուտների և ակտիվների հարաբերակցությունը նվազի 0.079-ից, ապա բանկը պետք է ուշադրությունը սևեռի բանկային պորտֆելի կառավարման արդյունավետությանը: Իր հերթին բանկի սեփական կապիտալի հարաբերակցությունը պետք է պահպանվի համապատասխան սահմաններում՝ հաշվի առնելով ROE-ի և ROA-ի մեծությունները (տե՛ս աղյուսակ 1):

Այստեղից հետևություն, որ յուրաքանչյուր առևտրային բանկի ֆինանսական գործունեությունը գնահատելու համար կարող ենք հիմնվել նաև ROE-ի, ROA-ի և բանկի մուլտիպլիկատորի փոխադարձ կապը պայմանավորող երկգործոն ռեգրեսիոն մոդելի վրա: Միաժամանակ շահութաբերության գործոնային վերլուծությունը մեզ հնարավորություն է տալիս ենթադրություններ անելու բանկերի առջև եկամուտներ ստանալու ժամանակ ծագող խնդիրների մասին և հուշում է բանկի ղեկավարությանը այն ուղիների մասին, որոնց միջոցով հնարավոր է մեծացնել առևտրային բանկերի շահութաբերությունը:

ԱՆՆԱ ԲԱՅԱՂՅԱՆ

ՀՊԱՀ դասախոս

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՍՊՐԵՂԸ ԵՎ ԴՐԱ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՇԱՀՈՒՅԹԻ ՎՐԱ

ՀՀ առևտրային բանկերի գործունեության արդյունքում ստացված ընդհանուր եկամուտներում և ծախսերում գերակշիռ բաժինը համապատասխանաբար պատկանում է տոկոսային եկամուտներին ու տոկոսային ծախսերին: Ուստի բանկային շահույթի վերլուծության ժամանակ կարևոր նշանակություն ունեն զուտ տոկոսային եկամտի մեծությունը և դրան առընթեր տոկոսային սպրեդի գնահատումն ու վերջինիս ազդեցությունը բանկային շահույթի վրա, քանի որ զուտ տոկոսային եկամուտը սերտ կապի մեջ է գտնվում բանկային տոկոսադրույքի մեծության հետ:

Յուրաքանչյուր երկրի ֆինանսական շուկայում ձևավորվող բանկային տոկոսադրույքի վրա ազդող գործոնները կարելի է ընդհանուր առմամբ բաժանել երկու խմբի: Առաջին խմբին պատկանում են երկրի մակրոտնտեսական իրավիճակից բխող այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ սղաճը, պետական բյուջեի դեֆիցիտը, ընդհանուր ինվեստիցիաների և ընդհանուր խնայողությունների հարաբերակցությունը, ՀՆԱ-ի աճը, ՀՀ Կենտրոնական բանկի (ԿԲ) վերաֆինանսավորման տոկոսադրույքի մակարդակը և այլն: Երկրորդ խումբ գործոններն ունեն միկրոմակարդակի բնույթ և իրենց էությամբ բխում են ֆինանսական համակարգի դրսևորման արդյունավետությունից ու իրենց արտացոլումն են գտնում տոկոսադրույքների սպրեդում, որը բացարձակ առումով բանկերի կողմից տեղաբաշխվող և ներգրավվող միջոցների տոկոսադրույքների տարբերությունն է: Վերլուծությունները ցույց են տալիս, որ, ի տարբերություն զարգացած տնտեսություն ունեցող երկրների, անցումային տնտեսություն վարող երկրներում, ինչպիսին նաև ՀՀ-ն է, տոկոսային սպրեդն ունի անհամեմատ բարձր մակարդակ, որի հիմնական պատճառներից են բանկային մրցակցության ոչ բավարար աստիճանը, բարձր շուկայական ռիսկը, բնակչության անվստահությունը բանկային համակարգի նկատմամբ և այլն:

Տոկոսադրույքի սպրեդի մեծությունն ունի տնտեսական երկակի նշանակություն: Այսպես,